HC 17065-4.2-2024 Հավելված 1

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի ՍՄ

Անկողմնակալության քաղաքականություն

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ սերտիֆիկացման մարմնի (այսուհետ՝ Սերտիֆիկացման մարմին) ղեկավարությունը, գիտակցելով արտադրանքի սերտիֆիկացման աշխատանքների իրականացման գործընթացում անկողմնակալության սկզբունքների ապահովման կարևորությունը, պարտավորվում է.

1. Արտադրանքի սերտիֆիկացման ծառայությունների ցանկացած հայտի նախնական գնահատման փուլում իրականացնել անկողմնակալության հնարավոր վտանգների վերլուծություն՝ համաձայն Սերտիֆիկացման մարմնում գործող ընթացակարգի:
2. Բացառել ցանկացած գործուղություն, որը կարող է ազդել Սերտիֆիկացման մարմնի գործունեության անկախության և անկողմանակալության վրա:
3. Տեղեկացնել արտադրանքի սերտիֆիկացման աշխատանքներում ներգրաված աշխատակիցներին այն գործողությունների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալ աշխատանքի վտանգները բացահայտելու դեպքում:
4. Չներգրավել արտադրանքի սերտիֆիկացման աշխատանքներին այն փորձագետներին, որոնք տվյալ հայտատուին երկու տարուց պակաս ժամանակահատվածի ընթացքում մատուցել են խորհրդատվական կամ այլ ծառայություններ: Սերտիֆիկացման մարմինն իր հայտատուներին չի առաջարկում և չի մատուցում խորհրդատվական ծառայություններ, ինչպես նաև սերտիֆիկացման սխեմանով նախատեսված աշխատանքների շրջանակներում նախատեսվող գործողությունների իրականացման համար չի ներգրավվում այնպիսի կապալառուներ, որոնք խորհրդատվական ծառայություններ են մատուցում կամ մատուցել հայտատուին:
5. Ֆինանսական հետաքրքրվածության կանխման և անկողմնակալության ապահովման նպատակով տարանջատել արտադրանքի սերտիֆիկացման փորձագետի՝ սերտիֆիկացման սխեմաներով նախատեսված աշխատանքների իրականացման ու աշխատանքների բյուջեի հաշվարկման, հայտատուներին գնառաջարկների ներկայացման, բանակցությունների վարման ինչպես նաև պայմանագրերի պատրաստման աշխատանքները:
6. Ընդունել Հավատարմագրման ազգային մարմնի և Հավատարմագրման խորհրդի որոշումները՝ ուղղված անկողմնակալության ապահովմանը:
7. Իրականացնել առնվազն տարին մեկ անգամ գործունեության վերլուծություն, ուղղված անկողմնակալության սկզբունքի ապահովմանը և փորձագետների գնահատմանը: Վերլուծության արդյունքների վերաբերյալ պարտավորվում ենք վարել գրառումներ:
8. Ապահովել իրավաբանական և առևտրային փոխկապակցվածության և/կամ ընդհանուր բիզնես շահերի բացակայությունը իր սերտիֆիկացման ոլորտում ընդգրկված արտադրանքի նախագծողների, արտադրողների, իրացնողների կամ սերտիֆիկացման ոլորտին առնչվող խորհրդատվական ընկերությունների հետ:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ տնօրեն Մ. Նուրբեկյան

17.06.2024թ